Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավատություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՇԱԿ ՇԱՀՈ

ՄԱՐՎՈՂ ԹՐԹԻՌՆԵՐ

ՑԵՐԵՎԱՆ 1926.

ԱՐՑԱԿ ՑԱՀՈ

ՄԱՐՎՈՂ ԹՐԹԻՌՆԵՐ

ՀՈՍՔ ԳՐԵՑՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԳԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿ ԱՇԵՆՈ
ԴԱՐԵՅՈՍ

ՅԵՐԵՎԱՆ 1926 թ.

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ.
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 836Բ.
ՏԻՐԱԺ 1000

I

ՄՇՈՒՇՆԵՐՈՒՄ

1923—1924

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Աղջամուղջի շողերի մեջ հուշ—անուշ,
Դու մոտեցար թեթև թևով հովի պես.
Դու մարդ չեիր, աղջիկ չեիր. իմ անուշ՝
Փերի եյիր հեքյաթային ու անտես։

Հյուրիի պես։ փերիի պես, դյութական՝
Նոր շունչ ավիր սրտիս տխուր բաբախին.
Ու հուշի պես, զեփյուռի պես, աննման՝
Նոր կյանք ավիր իմ մլաված քնարին...

Զ'լսեցիր ապաշանքին իմ տխուր՝
Ու ապրեցիր սրտիցս հեռու շատ հեռու...
Ինչքան կուզես հեռու փախիր ամենուր՝
Դարձյալ սրտիս վեհ թագուհին դու յես դու...

Աղջամուղջի շողերի մեջ հուշ—անուշ,
Դու մոտեցար թեթև թևով հովի պես
Դու մարդ չեյիր, աղջիկ չեյիր, իմ անուշ՝
Փերի եյիր հեքյաթային ու անտես։

...ին

Զգում ես, լսում ես դու ինձ,
Ու սրտիս տագնապները խրթին.
Բարի դու, շատ բարի նայիր ինձ՝
Ու խղճա իմ մեռնող հեգ սրտին։

Գիտես; վոր խղճալ ուրիշի
Յես չեյի սիրում պայքարում.
Բայց ինչս մնաց այն որից.—
Վոչ ծաղիկ, վոչ սեր, վոչ գարուն։

Ել բանի պետք չեմ աշխարհում,
Անպետք, շատ անպետք մի լաթ.
Իմ սիրտը քեզնով ե ապրում,
Քեզնով ե, քեզնով ե հիվանդ։

---

*
* *

Որերս տխուր են, որերս լաց՝
Վառվռուն կյանքից ել վոչինչ մնաց-
Հանգան հոգուս ջահերը հրավառ.
Վողջը գեղեցիկ... անցավ ու գնաց։

Առանց յերգելու սերը սրբազան,
Առանց մարտական մի խոսք հնչելու,
Յեկել եմ այսոր փշրված սրտով՝
Դողդոջ յերգերս արձագանքելու։

Սիրեցի շատ բան, սիրեցի թաքուն,
Ու ջոնել սիրտս այդ սերով վառվեց-
Թաքուն յերգեցի, ու շատ յերգեցի
Անապատ աղբյուր—յերբեք չապառվեց։

Բայց տես թե ինչպես սերս կաթոգին
Մարում է տխուր՝ աչքերիս առաջ.
Մնում է գոռամ, ասեմ ամենքին,
Զայնովս հուսահատ։ Ո՞ անհույս հառաչ։

Ասեմ՝ թե ինչպես յերկար սիրեցի,
Ասեմ՝ թե ինչպես յերկար վառվեցի,
Բոլորն ել հոգուս սև աղջամուղջում
Անխոս թաղեցի։

ՍՊԱՍՈՒՄ

Հիշում ես, լուռ հանդիպեցինք
Կյանքի մռայլ աղջամուղջում.
Ճամբաներում մշուշածին,
Ճամբաբաժան անորոշում։

Անորոշ էր ու աղջամուղջ,
Սիրտս կամաց էր թրթռում.
Վախենում նա խանգարել՝
Սորհրդավոր այդ լռությունն։

Վախենում էր վոր վախենաս,
Վախենում էր թռչես հանկարծ՝
Թողնես մենակ ու չքանաս,
Ու դառնաս միշտ անհա՛ս, անհա՛ս...

Եվ դու փախար ու չքացար,
Թողիր սիրտս հեծկլտալով.
Կգա՞ս արդյոք, նորից կգա՞ս,
Ո՞, յես մեռա սպասելով։

ԱՆՈՐՈՇ ՍԵՐ

Սիրում եմ, բայց թե ում,—չգիտեմ,
Զգիտեմ թե ով է ինձ հիշում.
Կապված է մեկի հետ հոգիս
Հեռու, շատ հեռու մշուշում։

Յերբա հնչում է թախծոտ,
Կանչում է մեկին միայնը,
Թռչում է սիրտս վշտոտ,
Դեպի հեռու մշուշն անհայտ։

Մշուշում հեռու ու անձուկ
Սիրտս ունի մի ընկեր աննման՝
Մի ընկեր, մի տաք սեր.—զգում եմ
Բայց ո՞վ է, չգիտեմ յես նրան։

Զգում եմ, վոր մի որ նա կգա,
Թեթև քայլերով վորպես հուշ.
Տաք սիրով արտիս շունչ կտա,
Կյերգի դյութական ու անուշ։

ՄՏԵՐԻՄ ԽՈՍՔԵՐ

Արշալույս, թե վերջալույս է.—չգիտեմ.
Իմ հոգում միշտ մշուշ է խավար.
Ո՛, դեռ շատ պիտ յերգեմ ու կանչեմ
Յերգերով այս տաղտուկ ու մոլար։

Գուցե դու չես լսում ձայնը իմ,
Այդ հեռվում անծանոթ ու խեղդող,
Կամ գուցե տվել ես հաճույքի՝
Հոգին քո և մաքուր և կեղտոտ։

Յեվ գուցե քեզ համար հաճույք է,
Տանջել մի ջահել պոետի.
Կամ կյանքը գինատատ խճույք է,
Իսկ սերը արբեցնող գինի։

Իսկ դո՞ւ տեսնել ես իմ հոգին՝
Ուր խեղդող մշուշ է հիմա.
Առանց քեզ քաղցր է մահը՝
Իսկ կյանքը՝ տանջող առորյա։

*
* *

Դու դեռ ապրում ես իմ հոգու խորքում,
Ու յերգում քաղցը, սրտալի մի յերգ.
Քո յերգն իմ սրտում տանջալի մի վերք.
Դու դեռ ապրում ես իմ հոգու խորքում։

Զվարթ պատկերդ դժգունել է շատ,
Վորպես շողերը աշնան արևի.
Դու դեռ ապրում ես, Ո՜, դու չես մեռնի։
Թեև պատկերդ դժգունել է շատ։

ՈՐՈՐ

Աշուն է, աշուն է, աշուն.
Աշուն է, ինչ ցուրտ է դուրսը.
Կ'մրսես, կ'մրսես մշուշում
Մշուշը անլույս է, անհույս է։

Շինված է անակս շատ հեռու,
Հեռու մարդկային ժխորից.
Ուր վոչ վոք չի գնում խաչվելու,
Հեռու մարդկային ժխորից։

Կ'վառենք տաքուկ վառարանը,
Կնստենք կողք-կողքի ամեն որ.
Կնստենք, կ'կարդանք Տերյանը,
Մեկ մեկու շղթայված ու սովոր։

Աշուն է, աշուն է, աշուն.
Քամի յե, փոշոտվեց Տերյանը
Կմրսես, կմրսես, արի տուն.—
— Տերյանը, Տերյանը, Տերյանը։

II

ՆԱԳԱՐԱ

1925 թ.

ԴԵՐՎԻՇ

Կնկնեմ յես քուչա-քուչա,
Որերի փոշոտ քաղաքում.
Կ'զարկեմ, կ'չալեմ նաղարա,
Վազող ու մրրկող քաղաքում։

Փոշին թող կիտվի ճակատիս,
Ինձ թող համարեն խելագար.
Որերի փոշոտ քաղաքում՝
Կ'չալեմ կյանքի նաղարան։

Թող մարդիկ յերնեն թամաշա,
Ու դիտեն պարն իմ խելագար.
Կ'նկնեմ յես քուչա-քուչա՝
Կ.յերգեմ մի նոր տրարա-րա։

Թող սաեն դերվիշ ե մի խենթ՝
Կռվել ե, կռվումն ե խենթացել.
Տեսել ե և՛ արյուն և՛ յերթ.
Արյունի հոտից ե հարբել։

Որերի փոշոտ քաղաքում,
Իմ յերգը գալիքին կ'պարգեմ.
Իմ նոր ու անուշ տրարա-րան՝
Գալիքին, գալիքին, կ'ձոնեմ։

Կ'ձոնեմ, թող գալիքն իմանա
Ու կանչի՝—Հեյ գիդի Շահո,
Յերգում եր մի նոր տրարա-րա
Զալում եր կյանքի նաղարան։

ՀՐԱԺԵՇՏ

Նաղարաս չալած շուկա գնացի,
Շուկայում յես տեսա նրան.
Շուկայից աղմկոտ եր նա,
Յերբ տեսա շուկայում նրան։

Ու անցա փողոցից փողոց,
Փողոցի մայթը թաց եր.
Նաղարաս փչում եր ուրախ.
Նա էլ ինձ նման հարբած եր։

Փողոցում խուլ ու համր,
Դեմքեր ու դեպքեր տեսա.
Դեպքերի այդ խուլ ժխորում,
Յես դարձա թագա փեսա։

Ահա պատուհան մի մեծ,
Մի աղջիկ քսում է պուդրա,
Սպասիր ասում է.—կ'գամ՝
Հենց եդ թաց մայթերի վրա...

— Յես ինչի՞ դ սպասեմ,—ասի,
Իմ նոր նաղարան քոնը չի...
Նաղարաս զլեց—«գնացի...»
Ու փախա նրա նեղ քուչից։

---

*
* *

Շահան ունի մի սիրած,
(Իմ նաղարան լավ գիտե),
Արթուն լինեմ, թե քնած,
Իմ սիրուհուն կ'գովե...

Թե յես լինեմ փողոցում,
Թե իմ տանը յերգելիս,
Թաքուն պաշտում սիրուհուս
Ու զարկում եմ դհոլիս։

Հորինել եմ շատ յերգեր
Իմ սիրուհուն նվիրած.
Նա մի անուշ ծաղիկ է,
Մեր սարերիցը բերած

Իմ նաղարան լավ գիտե՝
Շահան ունի մի սիրած.
Յեվ գինի յե և քեֆ է...
Իմ նաղարան լավ գիտե։

ՎԵՐՋԸ

1926 թ.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՈՒՆԴԱՄԵՆՅԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Ա I/8546

* * *

Կածաններով այս անծիր
Ո՞ւր յեկանք.
Եպես յերգեր յերգելով՝
Զուր յեկանք...

Ո՞, յերկնում է աշխարհը,
Նորն է ծնում նա հիմա.
Յեվ իմ հոգնած յերգերը,
Յեվ անզոր են և հիվանդ։

Ամեն կողմ խինդ ու աղմուկ
Կյանքը ա՛ի ծով ալեկոծ.
Մենք հաղթանակ չենք տանի...
Շուրջը հրդեհ, շուրջը բոց...

Յերգերս պաղ ու մռայլ...
Շուրջը կռիվ ու ական.
Պետք են զենքեր ու զրահ,
Պետք են յերգեր հաղթական...

Կածաններով այս անծիր,
Ո՞ւր յեկանք.
Մշուշներում յերգելով՝
Զուր յեկանք։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ
ՕՈՒԼԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎՊԱԳԵՄԻԱ

Ш. П. Д. ЛЕНИНГРАДСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045693

[06կ.]

A I/8546

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

ԲԱՑ ԿԱՐԴԱԼԻՔ